Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օտարման մեկնարկային գներ սահմանելու մասին որոշման նախագծի

Որոշման ընդունումը բխում է << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջից, համաձայն որի համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը օտարելու և մեկնարկային գին սահմանելու վերաբերյալ: Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը և սահմանել մեկնարկային գներ:

Աշխատակազմի բնապահպանության,
գյուղատնտեսության և հողաշինության
բաժնի պետ՝ **Բ. Թադևոսյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքային սեփականություն հանդիսացող 14 միավոր հողամասերի աճուրդ-վաճառքի մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Համայնքային սեփականություն հանդիսացող 14 միավոր 3.28133 հա ընդհանուր մակերեսով հողամասերը օտարելու մասին որոշման ընդունումը (որոնց կադաստրային արժեքը կազմում է 26839428 դրամ) Նաիրի համայնքի բյուջեում ենթադրում է 51200000 դրամ եկամուտների ավելացում, ինչպես նաև աճուրդի ժամանակ կատարված քայլերի արդյունքում հավելվող լրացուցիչ գումարներ:

Աշխատակազմի բնապահպանության,
գյուղատնտեսության և հողաշինության
բաժնի պետ՝ **Բ. Թադևոսյան**